

3366

Ս Լ Ա Ս Ի Կ Ա Ր Դ Ա Ն Յ Ա Ն

ԱԽՉԱ-ԿՈՒՅՄԱ

891.99

Կ-30

Ս Ա Խ Ե Լ Գ Ա Մ Ի

- 6 NOV 2011

ალასი ვარდანიანი

ახჩა-კუიმა

(პოემა)

აგასი ვარტანյან

АХЧА-КУЙМА

(Поэма)

8 NOV 5011



891.99

4-30

ԱՂԱՍԻ ՎԱՐԴԱՆՅԱՆ

Ա Ն Չ Ա - Կ Ո Ւ Յ Մ Ա

Պ Ո Ե Մ

Յեղրուկ նրաստակարգում

1001
3917

3366

Վ. Ս. Խ. Հ. ՊԵՏԼՐՈՍ

Թիֆլիս

1927



08.08.2013

56876

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԿԱՆ ԴՐՈՒՄԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՍԵՐԻԱԿԱՆ ԲԱՆԿԻ ՍՊԵՏԱԿԱՆ ԿԵՆՏՐԱԼԻ
ԿԱՆՈՒՆԱԿԱՆ ԴՐՈՒՄԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՍԵՐԻԱԿԱՆ ԲԱՆԿԻ ՍՊԵՏԱԿԱՆ ԿԵՆՏՐԱԼԻ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԿԱՆ ԴՐՈՒՄԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՍԵՐԻԱԿԱՆ ԲԱՆԿԻ ՍՊԵՏԱԿԱՆ ԿԵՆՏՐԱԼԻ
ԿԱՆՈՒՆԱԿԱՆ ԴՐՈՒՄԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՍԵՐԻԱԿԱՆ ԲԱՆԿԻ ՍՊԵՏԱԿԱՆ ԿԵՆՏՐԱԼԻ

1707
7195

0000

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԿԱՆ ԴՐՈՒՄԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՍԵՐԻԱԿԱՆ ԲԱՆԿԻ ՍՊԵՏԱԿԱՆ ԿԵՆՏՐԱԼԻ
ԿԱՆՈՒՆԱԿԱՆ ԴՐՈՒՄԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՍԵՐԻԱԿԱՆ ԲԱՆԿԻ ՍՊԵՏԱԿԱՆ ԿԵՆՏՐԱԼԻ



Սնագրերից ղեկավարությամբ
Ս. Սահակյանի մասերում, ինչ
տևապահի ավագների մեջ առա-
խող խոզ բաժնակցի կամեմունքնե-
րի անմիտ հիշատակին:

ՆԱԽԵՐԳԱՆՔ

Յավի տենդ չե,
Մի լեզենդ չե,
Վոր մորմորով պիտի պատմե
Պոեմն իմ.
Վոչ ել յերգ ե կարկաշախոս,
Կամ մի հիմն...

Վոչ, խոյացող խիզախ սրտի ավյուռնն ե,
Վոր ընկնում ե թևերը թափ արծվի պես!

Բոսոր, բորբոք, խորունկ վերքի արյունն ե,
Վոր ցայտում ե հուրհրացող բոցի պես!

Վոչ, սրտերն են, սրտերը խենթ բյուրավոր
Քնտակներին հոշոտ, խոցված, վիրավոր...

Մի լեզենդ չե,

Վոր մորմոքով պիտի հյուսե պոեմն իմ,

Վոչ ել յերդ ե կարկաշահոս, կամ մի հիմն...

Ամպներում կորած, թաղված վառ տենչ ե,

Վոր մեզ հավետ արյունածոր պիտ տանջե!..

Հոոր,

Հրեղեն,

Հրդեհներով վառ

Տարին եր չոքել աշխարհի լերթին.

Հողմերն եյին բոց, մըրթիկները մառ.

Հողն եր հանձնվել յերկաթե յերթին:

Տասնևութ թվական!

Համբըլ ես արդյոք քո հերոսներին,

Վորոնք այրվեցին, թաղվեցին, չկան!

Քո տարին եր հուր ընդվզումների,

Յերբ շղթայակապ, կենդանի թաղված

Մասսաները հոծ՝

Միշտ հլու, գերի,
Հարություն առած,—
Վուրկանների թեժ ժայթքումը ժխոր
Սրահերում փռած,—
Իրենց զայրույթի հուրն ելին անմար,
Ասելությամբ խոր,
Բորբոքում զաժան փոսիսի համար!

Ուղիներն ելին անքում յերկնի տակ
Քանց գերեզմանոց!
Յերկիրն եր խոցված ընկել նահատակ,
Յերկիրն՝ հուր հնոց!..

Հզոր, հրեղեն, հեղափոխական
Տասնևութ թվական!
Քարերի սրածում մեխվեցիր լուսեղ,
Հավետ փառահեղ,
Պայծառ,

Շառաղույն!
Թուլել ես,
Թովում
Ու զեռ պիտ թովես...
Բայց դու և սև ես,
Սև ես,
Անողորմ,
Մոլի ու ահեղ
Պայքարիդ բովում!

Նայում եմ ահա ու տեսնում եմ քեզ,
Քո յեղեր տարին,
Յերբ քարդ քարին
Ձեն թողել հիմքից վաշտերը հրկեղ.
Քո տարին գուժկան, յերբ Դոնն եր կարմիր
Դիերով ծածկել յերեսն անուրախ.
Յերբ Վոլգան եր իր
Ջրերը ներկել արյուն ու թարախ...

Քո տարին սևոր,
Յերբ մեծ լենինն եր,
Համաշխարհային
Յավերը կրծքում,
Անթև,
Վիրավոր...
Ու յեղեռնական սև Ախշա-կուլմում
Անտապտն անծիր արյուն եր քամում...

Ծխերի միջից ու մութ մշուշից
Արևը յելավ՝ դեմքը սև ու մուր,
Վորպես մի բանվոր իր գործարանից,
Ու նայեց մռայլ աշխարհին հանուր...

Տեսավ՝

Իր պես լուռ

Բազուն սևարև

Զարթնեց ամպամած գիշերվա գրկից.

Ո՛վ ում պատահեց՝ չովեց բարև,

Խորթ էյին իրար ծանոթ ու դրկից.

Դործարաններից շշուկ չը կանչեց,

Վիշկաների տակ տարտալ՝ շշիկ չկար.

Քաղաքն ամայի անխոս հառաչեց՝

Մեծ ցավ եր տանջում կուրծքը չոր,
Տկար...

Արեւ չ'ելավ, բանվոր խեղճն եր
Դուրս յելավ տնից մոլոր ու տարտամ,
Սրտով տխրամած,
Վոր այսոր նորից նա հանգիստ չուներ,
Նորից,
Նոր անգամ...

Վորոնց նրանց՝ ովքեր չկային.
Մեկը ժպտերես, չարախինդ, վարժամ,
Քիթը վեր նայեց դատարկ Ձեկային...
Խեղճն գունատվեց,
Խնչպես վիրավոր,
Վոր նոր է տեսնում իր վերքը արնոտ.
Խոր կսկիծ գգաց,
Խոր,
Արտասովոր,

Կարծես ծակծկվեց հուշերից թունոտ...

Դեռ յերեկ գիշեր Խորհրդի նիստում
Բալ'չեիկների դրոշն եր արնագույն,
Իսկ այսոր նրանք նավահանգստում
Մասնաված,
Մերժված,
Թողնում են Բազուն:
Ջափարիձեյի ու Շահումյանի
Քաղաքն եր ընկել խաբված, խայտառակ,
Դռները բացել իրա սահմանի
Թշնամու համար,
Վորպես իր գիրկը ծախու, անառակ
Կարող է բանալ պոռնիկը լպիրշ
Ամենի համար...

Բազուն չը զարթնեց, թմրած եր տապից,
Արե չը տեսավ Բիրի-Հեյբաթն ել.
Սե, մռայլ ու մունջ վիշկաներն ափից



Նայում են դեպի կապույտ անհայտներ
Դանդաղ հեռացող մոլոր նավերին,
Հազար փորձանքով պարուրված կսկուծ,
Վորոնք սահում են իրենց ավերին,
Յավերին մահի
Այսօր
Կամ եղուց...
Տեսնում ե թեչոն՝
Կրակ են շաղում նավերի յետքից
Մուսավաթն, եսերն ու Յենարոկասպին...
— «Զազրելի վոհմակ, ձեր լիտի դեմքից,
Յերբեք անցնելու չե անարգ սպին!..
Որը շուտ կը գա,
Ե՛լ ավելի շուտ,
Քան կը կարծեք դուք,
Յերբ ձեր հոգու դեմ՝ դավաճան ու սուտ,
Կը կանգնի անշուք
Սև պատասխանի ծանրությունն հատուկ...»

Չոր, ցամաք, կմախք Նարգենը անցան.
Ծռիլ ե ծըփծըփում հյուսիս, արևելք.
Նավերն են լողում գեգեր, ցիր ու ցան,
Թվում են բոլոր ուղիներն անելք!
Վորոտը լուեց թնդանոթների,
Վերջին ուումբն ընկավ իզուր ու անգոր.
Ազատ են վտանգից նավերն հեռացող
Կամմունարների...
Յասկոտ են նրանք,
Սրտերը բոսոր
Բաբախում են բորբ բռնկումներով:
Մոտ վերագարձի ուխտով են հզոր՝
Անվերջ պայքարի վոխերիմ հրով,
Նայում քաղաքին՝ հեռվում խավարող...
Մասս բարևի խոսքերն են մարել
Լուռ շրթունքներին.
Ինչո՞ւ հեռանալ...
Մնալ,

Չ'հեռանալ

Ու արհամարհել

Նոր կռվի համար և՛ փորձանք, և՛ մահ...

Ի՞նչ ծանր է, դժվար այս սև որերին

Ամեն մի քայլը,

Ծանր,

Ակամա!..

Արևը կամաց յերկնակամարում

Մշուշը ցրեց հորիզոններից.

Լույսերով ծածան ծովն է որորում

Ջրերը պայծառ հեռու ափերից:

Նավերը բոլոր բռնեցին ուղի

Դեպի նոր յերկիր՝ Խորհուրդների վայր.

Մարանչող ու հաղթ Մուրճ ու Մանգաղի

Յերկիրը կարմիր,

Ազատ

Ու անծայր...

Թող վստխը նենգ հաղթանակ տոնի,

Թող նավերը մեր հեռանան պարտված,

Բանվորը յերբեք նրան չի թողնի,

Վոր Բագուն մնա նոր կյանքից զտաված...
Միայն նրանցից մեկը յեա ընկած
Լողում ե մենակ,
Շարժվում ե դանդաղ՝
Վիրավոր ճամբորդ, կես ճանապարհին
Փորձանքներով լի, ընկել ե անհետ
Ու արեադաղ...
Ձեն ուզում գնալ՝ նավավարը հին
Նավաստիներով՝ կարմիրների հետ.
Կանգնել են համառ,
Կապույտ ծովի մեջ
Դավաճանորեն, դավադիր ու խեթ...
— Ձենք ուզում գնալ հեռու Հաշտարխան,
Վառելիք չունենք, վոչ ջուր կունենանք.
Այսպես Կրասնավոդսկ կը հասնենք միայն,
Կամ թե վոչ՝ Բագու կը վերադառնանք...
Դավաճանություն,
Ո՞վ բացեց լեզուդ

Սնամոթ ու նենգ,
Խաբերա
Ու սուտ...

Ամբոխն ե սրված հուզվում վայրաբար,
Կանչում միաձայն —
— Կրասնավոդսկ միայն,
Ձենք ուզում գնալ հեռու Հաշտարխան...

Նավավարը նեռ տվեց հրաման՝
Դեպի Կրասնավոդսկ բռնել ճանապարհ...

Վաղուց պատրաստված դավադրության
Ուղին արյունոտ
Մշուշվեց ծովի մթնշաղիներում
Արևների պես մայրամուտին մոտ...

Նամիւ ե ոլորովում ջրերի վերա
Մենակ ու մոլոր.
Երեն ե մեռնող, վոր կը յերերա
Ճամբեքում վոլոր.
Մատորն ե կանգնել աշխարհի սրտում
Ու չի աշխատում!
Յանկուլթյունը չար,
Չարակամ,
Չարհուլդ,
Փակել ե բոլոր
Ուղիները լույս...
Գիշերը իջաւ ծանր, սև ու մութ,
Վրդով ու շփոթ.
Գիշերը թանձր, նեռ, դարանամուտ,
Վորպես մահվան բոթ,
Արճիճը փռեց խավար ջրերին,
Ու խոկումների
Սրերը մեխեց հուզված սրտերին

Կոմմունարների...
Ճամբորդը մոլոր, մենակ ու վտար
Վայրերում ոտար
Հյուր ե հավաքվում իր նենդ վոսոխին,
Վողջույն ե տալու նրա ժանտ հողին!

Նամիւ ե մոտենում խավարի ծոցից
Լուռ ու ահալից
Ափերին խարխուլ խուլ Կրասնավոդսկի,
Վոր հանձնվի հրին,
Թշնամու ահեղ, մահաբեր սրին!

...Կրակներն աղոտ թարթեցին սևում,
Վորպես վոխերիմ խարույկներ հեռվում...

Խորամանկ,

Խարդախ

Քաղաքն անորեն՝

Վոստայնը հյուսած յերկաթե կամքով,

Դավերի աղբյուր, դալաճանորեն

Ամենին թովող ոճերի աչքով,

Հեռվից ապահով թակարդի նման

Յերախը բացեց՝

Մնձայն,

Ամայի...

Ա՛փ են վոտք զնում, թե՞ սառ զերեզման,

Ո՛վ ե իմանում իր ժամը մահի՛!

Նավը լուռ կանգնեց ու զաղապարդի

Շունչը ընդհատեց.

Կարծես չեր ուզում մոտենալ հողին

Իր թաց մարմնով մեծ...

Բայց վոչ, վաճառու թեթևությամբ դարձ

Նա հողը գրկեց,

Հենց վոր յերեվաց պահակն անգլյական

Գոռ,

Պատրաստ ու վարժ

Ու հոխորտական!...

Դեռ չեն ել իջել նավից յեկոզներն,

Բոլորը մեկ-մեկ զինաթափվեցին.

Անգլյական զոհն ե հիմա այս կողմերն,

Թե կին, տղամարդ շրջապատվեցին:

Ջոկեցին բոլոր կոմմունարներին,

Իրենց կանանց հետ, յերեխաներով.

Ու նոր պիտ փովեր լույսը քաղաքին,

Յերբ բանալ նրանց գրկեց յերկաթով:

Քաղաքը զուր չե ճերմակների բույն,
Անգլյական կաշառն՝ ամենակարող,
Համաշխարհային նեռ արյունարբուն՝
Յերկիրը դարձրել վոճիրների հող!
Ո՞վ չի հավատում Մալեոնների
Կարգ ու որենքին՝ վոսկու պես փայլուն,
Վոսկուց արյունոտ,
Անասունների
Անհաշտ կրքերից համառ,
Աննկուն!

* * *

Ճանապարհն ե փակ!

Յերկիրնքը սեղմվեց սրտերին դալուկ,
Վորպես գորշացած տանիքը տափուկ,
Ո՞վ եր հույսը վառ փակեց մահալլուկ,
Տխրանքով մարեց և լույս, և փափազ...

Տառապանքներից մայրերն են նվաղ...
Արժիվը ախրեց խավարում մշուշ՝
Վերքերի ցավից անգոր եր, ավանդ,
Թեաթափ,
Անհույս,
Խոցված ու անուժ...

Հեռու յեր Բագուն՝ սև մրի տակից
Բոցեղեն շնչով մարանչող ու վես!
Զկան բանվորներ՝ ընկեր, սրտակից.
Նեխված, զաղրելի, գարշահոտ բանտում
Ընկած պիտ մաշվես...
Ու տմեն դիշեր անքուն, անխնդում՝
Սրահում վառվող մի հատ լապտերին
Կուրացած նայես...
Յեվ յերբ լուսադեմ նրան ել մարեն,
Դու յեղ լուռ մարվես...

Ե՛յ, դահիճ ես, հիմ,
Գիտենք, վոր մահից դաժան ես հսկում,
Ավելի դաժան, քան սարսափ ու սով,
Սարսուռ ու սոսկում.
Միայն իմացիր,
Ցավերով մահի իգուր ես սաստում...

Ե՛յ, դահիճ ես, հիմ,
Ցերը վոր կարեցիր աչքերիս համար
Արեր լուսով,
Յերկինքը կամար,
Խնչո՛ւ յես վառել լապտերը դժգույն,
Վոր թարթում ե մեկ
Լուսամուտի դեմ՝ վորպես բու անքուն,
Վորպես մի աղոտ վերջին հույս համառ՝
Սրտերում լքված մահապարանների...
Մարիբ նրան ել, ու ել մի՛ վառիր...
Թող մութը իջնի մառախուղ ու մեզ,

Աղջամուղջը մառ...
Թող հալվի,
Մարի
Վերջին հույսը հեզ
Սրտերում դեռ վառ...

Որեքը ծանր,
 Մաղձոտ
 Ու հոռի
 Փռվել են վորպես ջրերը ճահիճ,
 Նեխված ու անշարժ!
 Ոգն է ժահրահոտ խայթոցով բռնի
 Կրճքերը ծակում...
 Որեքը դառն,
 Դժնդակ,
 Դահլիճ՝
 Կանգնեցին անշարժ
 Գիշերվա կեսին քարե վանդակում...

Ժանգը յերկաթի զրնգաց զազիր
 Տարածամ բանտում,
 Թե՞ ժանտ ու ժպիրհ
 Բռթն է հոխորտում՝
 — Շահումյան,
 Զեին,
 Զափարիձե,
 Բերդ
 Ու Ֆիդեաով...
 Դուրս յեկեք, գնանք, ուղարկում են ձեզ:
 — Ո՞ւր:
 — Մեկ չե՞ կարձես:
 — Ասիաբադ:
 — Իզուր...
 — Կարուկ ու նորից
 Մենք բողոքում ենք,
 Վոր մեզ խաբում եք առաջին որից.
 Ի՞նչ որենքով եք պահում մեզ բանտում,

Հիմա յեկ դարձյալ մեզ սուր եք տանում...
— Ուղարկում ենք ձեզ Ասխաբադ հիմա,
Մենք պարզ ասեցինք,
Ի՞նչ չեք հասկանում...

— Թող ձեր խայտառակ շտաբն իմանա,
Վոր մեր բողոքի ձայնը կը հասնի
Ուր հարկավոր է,
Անլուր չի մնա...

— Իզուր եք, իզուր,
Բողոքում մեր դեմ.
Անգլյական շտաբն
Վոչինչ չի անի որենքին ընդդեմ...

Նորից են կանչում՝
— Կարգանով,
Բասին,
Ամիրյան Արսեն՝

Ու Աղիզբեգով...

Մեկ-մեկ կանչեցին քսանվեց անուն...
Քսանվեց հերոս կոմմունարներին
Բանտից դուրս տարան...
Խեղդող գիշերի խավաբը անհուն
Հառաչեց լսին,
Գաղանի որոբվեց զեպի կայարան
Ու քարացավ մեղծ!

Քարայրում փակվեց վոճիբը լպիրշ
...Հանդստուխյամբ կեղծ!

Թանձրամած սևում զնացքը արագ
 Կարում ե ուղին,
 Յերկաթը բաղխում,
 Շնչում ե կրակ.
 Խոր անապատի սիրտն ե բարախում
 Իր հոգեարքին,
 Վոր մեկեն կանգնի, ել չբաբախե,
 Ընկնի շնչասպառ ու մահաճարակ
 Անհայտ յեզերքին...

Գնացքն ե թռչում արտակարգ, շտապ,
 Յերեք վազոնով՝ լույսերը հանգած.
 Մեկում ցավերով հրկեզ, հրատապ
 Կոմմունարներն են քսանուկեց ընկած:

Իրար են հալում խոնավ հատակին,
 Մառ շղթաներից թմրած ձեռ ու վոտ:
 Վայում ե աշնան վտարակ քամին
 Խավարում անհուն՝
 Արդյոք պիտ բացվի՞ նորից առավոտ
 Սև ուղիներին հեռու,
 Անանուն...

Ո՛ւր են շտապում այս խավար պահին,
 Անհայտ ու դադանի...
 Թռչում են վերստերն անթիվ, անհամար,
 Ու ամեն մի վերստ,
 Վորպես մի սվին,
 Ուղեղ ե ծակում կսկիծով անմար,
 Մաշոզ խոհերի շարաններով բյուր,
 Ու նորից սուղվում, հանձնված ցավին,
 Մեզ, մշուշ, մռայլ մառախուղների
 Մութը մահաթույր...

Ե՛յ, լսի՛ր,
Լսի՛ր,
Ընկեր կոմմունար,
Վոսոխդ վայրի, վայրենի, վատթար,
Պատրաստում ե խենթ քո սրտին ցավոտ
Վերքերի մի նոր սոսկալի մորմոք,
Վոր ել չը բացվի քեզ նոր առավոտ՝
Արևով բորբոք!...

Ե՛յ, լսի՛ր,
Ե՛ն մյուս
Յերկու վազոնում
Վոսոխդ ե վայրի,
Մի ամբողջ պահակ
Դահճի սրերով՝ մահ ե ծրագրում,
Ու նրա դեմքին լոխն ե նեո, անհագ,
Չարախինդ փովել անդուսպ,
Վա՛վաշոտ...

Ամեն ինչ զգուշ խորհել ե,
Հաշվել,
Հիմա յեւ բացել լիտի կերտւիւում
Պոռնիկ ու պաղշոտ...

Անապատն անծայր—

Մի դերեզմանոց,

Աշխարհի վերջին ընկած կույր,

Շվար...

Յերկիրը ավեր՝

Մարած ու մռայլ, փշրված հնոց,

Ահաբեկ թռչուն՝ անբուն, անծվար...

Գիշերն է փռվել,

Փաթաթվել քան ոձ,

Մթին ծալքերով՝ թանձրամած, ստվար...

Վամպիրն է ծըծում

Դիերը սեխոց,

Հալվել է մահվան բերրով խավար...

Գիշերը արճիճ,

Ամեն ինչ խեղդող

Իր ծանր մաղձոտ մղձավանջներով,

Վորպես խեղդված ճիչ,

Սիրտը ահ ու դող,

Փռվեց մտատանջ հեղհեղումներով...

Խավարուտ գիշերն անլույս, սև ու սուգ

Հավաքեց դանդաղ ծալքերը դունատ

Ու հոգնած հալվեց՝ աչքերն արտասուք՝

Վայրերում դեղին,

Ճամբերում անհայտ...

Կարճես սղատար այրին սևաքող

Արտասուկեց,

Ընկավ ցավերից արբած.

Հորիզոններում մարմինն է դողդոջ
Քամու ծեծկքի տակ դեղնում հիմա բաց...

Ճամբերում փովեց տաղտուկ լուսաբաց!...

Անապատը կույր,

Մութ, մռայլ ու խորթ,

Հորանջեց քնկոտ, չոր ավազներով

Գալարվեց, վշշաց շարքերից հոխորտ

Ու գորշացավ սառ իր յերազներով

Ճամբեքի վերջին, աշխարհի գրկում,

Ուր վերստերն անթիվ սսես չքացան,

Մի մշուշ-մեզում

Մհացան,

Անցան...

Լուսաբացն իջավ մուր ու անձայն...

Ամենի, դժգույն, ամայի, դատարկ,

Յերկնքից յերկինք անապատը մերկ,

Շարժվող բլուրներ ավազից շարք-շարք
Ու յերկու տատասկ փշաքաղ ու լերկ,
Մեկ ել կորացած սյուներն հեռագրի
Անտեր ու պապանձ—

Նայում են հեռվում հազիվ նշմարվող
Ինչ վոր շենքերի...

Ախշա-կույմեն է մնացել անանց

Խոր խորքում յերկրի,

Վորպես փոճիրը դարերում ներհող

Բյուր կայենների...

Գնացքը կանգնեց մահվան յերկունքով

Ուղիներում գորշ՝

Խոր անապատի սիրտն էր, դադարեց

Վերջին տանջանքով...

Մի ինչ վոր սուվեր չար ու անախորժ

Սուրաց յերկնքով...

Ու ելի յեկան,-
Անդեն ու խիզախ...

Ու ելի ընկան...

Բոլորը հատ-հատ...

Քսանուկեց գիտի հեղափոխական!..

Յեւ յերբ թշնամին արյունաթաթախ

Դիերը ձգեց ձորակը փութով,

Ավազով ծածկեց սրտերը մատաղ

Ու վերադարձավ ժպիտի ժպիտով՝

Անտառատը փողջ կարմիր եր, արյուն,

Ավելի կարմիր, քան հորիզոնում

Տխուր յերերվող արեւ դժգույն,

Արշալույսը մեղկ

Անգլյական գոնում!..

Չախկալը հեռվում սևով ստվերվեց,

Նրա գիշատենչ փռնոցը քաղցած

Ավազների մեջ խուլ-խուլ գալարվեց...

Հղոր,

Հրեդեն,

Հրդեններով վառ

Հեղհեղումների տարին են անցավ.

Աշխարհի կրծքին վերքերն արնով վառ,

Խոցերը խորունկ փակվեցին անցավ.

Կրակ որերի տառնապը չկա

Մաշող, մահացավ.

Մխայն քո դեմքից,

Ե՛յ, Ախշա-Կույմա,

Վոճիրը գաղիր,

Արյունը թափված դորշ ավազներին,

Մնաց ու չանցավ!

Այրված սրտերում, արոտներում չոր
 Նոր կյանք ե զնգում կանաչ շոյանքով,
 Սրտերը բեկված, ցավերից առչոր,
 Բացվել են զվարթ զարնան դգվանքով.
 Վայրերում ավեր, ուր սուգ եր ու մահ,
 Յերգը սեր կանչեց անուշ թովչանքով,
 Մենակ քո կրծքում,
 Սև Ախշա-Կույմա,
 Մնացին հավետ ճիշերը վերջին,
 Վոր հնչում են դեռ մահվան սառնանքով...
 Հեղեղից հետո զաշտերն են ժպտում
 Ծիածաններով
 Պայծառ,
 Կարկաչուն.
 Հրդեհից հետո բունն ե նորոգում
 Նոր որվա համար ամեն մի մրջյուն.
 Հողմերից հետո հովեր են գալու,
 Արև պիտ փայլե, կը գա ուրախ որ.

Ե՛յ, Ախշա-Կույմա,
 Դու յես մնալու՝
 Վռճիրդ գրկած, հավետ խայտառակ,
 Սեվ ու սեանուն, միշտ անեծքով խոր...

Ուղեցիր նրանց սրտերը մարել,
 Կոմմունարների սրտերն հրավառ
 Ու արեգական!
 Ուղեցիր քամել կարմիր արնով փառ
 Սրտերը նրանց՝ անահ ու անմահ,
 Իսկ նոքա դեռ կան!..

Ուղեցիր թաղել խուլ անապատում
 Կանչերը վերջին՝ անտես, անվկա,
 Վոչ վոք չը հիշի!
 Ինչպես թաղեցիր քո անապատում
 Պատուտած
 Լքած,

Կտորները ալ
Նրանց զրոյի!
Իզուր ու իզուր,
Ու ելի իզուր...

Անապատը քո սև ու լայնածիր
Զը մարեց նրանց սիրտը լուսեղեն,
Զոր ավազներով չը թաղեց խորունկ
Կանչը հրեղեն...
Ու ելի, ելի կուգես լայնացիր!..
Կանչերը նրանց հազար կանչերով,
Քո անապատի հողմերից անապատ,
Մըրկվում են գու,
Շաշում են հալարա,
Բաղմաարձագանք—
— Մենք զեռ կը հաղթենք,
Մենք նորից կը գանք...

Ամեն իրիկուն,

Արևի վերջին ճաճանչների հետ,
Յերբ բանվոր խեչոն՝ նորից աննկուն՝
Նայում ե հեռուն,
Հիշում ե անմահ իր հերոսներին,
Տեսնում ե ինչպես անապատի մեջ
Դեռ կա շառագույն մի վառ արահետ...
... Սրտերն են խոցված կոմսունարների,
Արյուն են ծորում,
Վոր անապատի գորշ ավազներում
Վոճիրը զաղիր չը ծածկվի անհետ,
Զը ծածկվի, մնա...
Բանվոր խեչոյի սրտից ե ծորում
Արյունը կարմիր,—
Վոճիրն առհավետ
Նա չի մոռանա...

ՎԵՐՋԵՐԳԱՆՔ

Անցան որեր

Ու ամիսներ,

Ու տարի.

Մեծ ճամբեքով հազար ու մի քոչ անցավ.

Արտ ու արոտ հրդեհներից պայքարի,

Քաղաք ու գյուղ, յերկիրը վողջ սևացավ...

Անտառատում ավազները հողմահար

Հազար ու մի դավ ու վոճիր թաղեցին,

Հազար հեռքեր, գերեզմաններ անհամար.

Տատառներով, բլուրներով ծածկեցին,

Բայց շիրիմը նվիրական սիրով վառ

Սրախողխող ընկերների քսանուվեց,

Արյան հեռքերն հավետ բոսոր, հավետ վառ

Տարիների հողմը հրկեզ չը ծածկեց...

Ամեն գիշեր,

Յերբ խավարի ծաղբերով

Մութն եր ծածկում դեմքը տանջված սև հողի,

Ու քաղաքում բանվորն եր խոր վերքերով

Հեծում, մաշվում,

Կարոտ լույսի ու շողի,

Շահումյանն եր հուշատուր մատրում

Ընկերներով վտարանդի, քան մի լույս,

Խարույկ վառում անասլատի խավարում

Ու ձայն տալիս բանվորներին, մի վառ հույս...

Յեվ յերբ գիշերն անցնում եր լուռ ու ցավոտ,

Աղջամուղջի մշուշն եր ցուրտ գունատվում,

Անասլատին իջնում եր գորշ առավոտ՝

Քսանուկեցի խարույկն եր դեռ թույլ ծխում,

Վոր իր հետքերն, վորպես նշան Մեծ Մահի,

Նոր որերին, նոր աշխարհին նա պահի!

Անցան են բորբ որերը հուր, արնահեծ

Վաղուց ընկավ փոսոին անեղ ու համառ,

Հին աշխարհից քարը քարին չը թողեց

Հոկտեմբերյան հողմը հզոր, հրավառ.

Բազուն նորից կապեց կարմիր ծիածան,

Խորհուրդների դրոշն հպարտ պարզվեց,

Բազուն նորից գրկեց անմահ, ցիր ու ցան

Իր հարազատ հերոսներին քսանուկեց...

Հիմա նրանց դամբարանը ումրակուռ

Հաղթանակի վորպես ամբոց հրաշակերտ,

Վորպես հավերժ զայրույթը բորբ,

Հրաշք լուռ,

Աբեկեքի դռան առաջ հրե բերդ!..

Արշալույսին, յերբ փոսկեղեն շողերով

Արեն հիմա փռվում ե ջերմ ու բարի,

Շինականն ե հոտը քշում հողերով,

Վորոնք նրանց ալ արյունով են բերրի,
Վառ արյունով ախշակույմյան զոհերի...
Զավոդներում,
Վիշկաներում,
Ամեն տեղ,
Ուր շշակն է աշխույժ կանչում վառաակի,
Քսանուվեցի ձայնն է հզոր ու հնչեղ,
Սիրտ է ապրիս նոր պայքարի,
Նոր զարկի...
Նրանց բոլրոք արյունն է ծոր հուրհրում
Մասսաների սրտերում բյուր մարանչող.
Նրանց ծածան անուններն են աշխարհում
Բոլոր բոսոր գրոշներին՝ հաղթ կանչող...

Յեզ գեռ հիմա

Ախշա-կույմի մոտերքում,
Քավար ու մութ գիշերներով անականչ՝

Հուր է վառվում անապատի սև կրճքում,
Կանչ է լսվում հեռուներից մահատանջ...
Շահումյանն է ընկերներով մտերիմ
Կակիձն այրում ավազներում անշիրիմ...

Բորբոք սրտի հուրն է անմար,
Հարատե,
Կրակը բոց ու անվրեժ խոր ցավի...
Շահումյանն է,
Սպասում է հրաթե,
Վոր Լոնդոնում Հոկեմբերը հոգեկլի...

1925



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

	Եջ
Նախերկանք	9
Գլուխ 1	11
» 2	15
» 3	21
» 4	26
» 5	32
» 6	36
» 7	40
» 8	47
Վերջերկանք	55

ԱՂ. ՎԱՐԴԱՆՅԱՆԻ ԱՌԱՆՁԻՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒ-
ԹՅՈՒՆՆԵՐԸ

1) Ալեքսանդր Բլոկ «Տասներկուսը», պոեմ,
հջ 48, 1925 թ.:

2) Զոհեր, ժողովածու բանաստեղծություն-
ների, հջ 96, 1926 թ., Թիֆլիս:

3) Ախչա-Կույմա, պոեմ, հջ 54, Թիֆլիս.
Վրաստ. Պետ. Հրատ. «Ստեղծված»:

4) Ի. Վ. Ստալին, կենսագրություն. Թարգմ.

Հանձնված և ազագրույթան

5) Բանաստեղծություններ, ընտիր ժողո-
վածու, հջ 160, Թիֆլիս. հրատ. ՀԽՍՀ Պետհրատի:

ՀՀ Ազգային գրադարան



NL0368716

56.876

60 կուպ.

